



ՄԱՐԳԱՐԷԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Ս. Մեսրոբ կը դիմէ Արտաշատ՝ հայ արքունիքին իր գիտը ներկայացնելու) .

Մենաւոր ճանապարհ, առաջնորդ դէպ ի տօներն Արտաշատու, բնկեր իմ երբեմնի խոկումներուս, ո՞վ ճանապարհ իմ Հայրենիքիս և Անցեալիս, զքեզ շրջագծող այս հիրիկներուն մէջ՝ երջանիկ տարիներս է որ կը կրկնուին:

Հին զգացումներս՝ թուփերուդ մէջ դարանած՝ ինձի կը սպասէին. անոնք յարձակումով բնդ առաջ կը վազեն ինձ՝ մանուշակներու նոյն սուր բոյրին հետ:

Մենաւոր ճանապարհ՝ որուն ծայրը կ'ակնկալեն իմ սիրելիներս, զքեզ փառքի ճանապարհը պիտի բնեմ այսօր:

Գաղափար մը կը բերեմ ինձի հետ. և ան՝ աստղի մը պէս՝ ոսկեղէն կայծ մըն է աշխարհ մը պարունակող: Սիրտս գինովցած է աւոր գեղեցկութեամբ՝ ինչպէս մայրը իր որդւոյն նայուածքով, ինչպէս անդրիագործը՝ իր կերտած դէմքով: Կը յառաջեմ անոր աներևոյթ լուսապսակին մէջ, և դափնիներէս աւելի՝ երջանկութիւնդ է որ հոգիս կ'ալիկոծէ հաճոյքի յորձանքներով, ո՞վ իմ հայրենիքս, սրտիս լուսմեհեանին մէջ պաշտուած:

Արդէն Արտաշատը հսկայացած է հորիզոնի վրայ. իր քանդակները՝ մէկ վայրկենի մէջ աճող մարդիկներու նման ամպերու մէջ կը ցցուին: Ահաւասիկ կամարակապ դուռը՝ ուր դեռ երիտասարդ զօրավար՝ փողերու ձայնով կը մտնէի՝ հայ ամբոխի հիացման հետամուտ. վարդերու զորք մը փռուած էր ճամբուս վրայ, ուր յաղթական դրօշ մ'այն ատեն ինձ կ'առաջնորդէր:

Ո՞վ յիշատակներ, ինչպիսի՜ հեռանկարի մը մէջէն կ'երևնայ ինձ. անշունչ առարկաներ՝ կարծես յանկարծ կը տխրիք այնքան փոփոխուած տեսնելով զիս. աիշած էք այս ամբոխին նման՝ որ արբուհիք կը վազէ իմացնելու Մեսրոբայ վերագարծը՝ ինչպէս թէ հին տարիներու յիշատակ մ'ըլլայի մտքի մէջ արթնցած կամ միտեալ մը գերեզմանէն ձանձրացած, այս ամբոխին նման՝ որուն սչքերը ցցուած նիզակներու ետեւն ինձ կը նային և ներկայիս անվարժ՝ անցեալս կ'արտասուեն:

Դուք կը յիշէք սիրտ մը՝ մահէն անվախ, բազուկ մը՝ թշնամեաց մահաբեր, և զարգմանակի շուրք՝ շեշտ կիսադէմքի վրայ:

Հիմա քարայրէ մը կու գամ: Խաւարը դեռ չէ թօթափեր հանդերձիս վրայէն: Ընդմեջ ալիքները գլխուս վրայ՝ ջրվէժ մը կը թուին

ժայռի մը շուրջ: Աչքերուս մէջ թափառող տարօրինակ բոցը մտածմանս և տանջանքներուս կրակը կը մատնէ:

Բայց անվրդով կը կանգնիմ ձեր առջև, ձեր՝ որ իմ երջանիկ տարիներս տեսաք, որովհետև զազափար մը կը բերեմ ինձ հետ՝ և ան իմ անթառամ երիտասարդութիւնս է:

Ահաւասիկ Հայաստանի արքան՝ դիւցազներու պսակի մը մէջ, և հայրապետը՝ եկեղեցւոյ մարմարեայ հրեշտակներուն միջև: Կ'ողջունենմ ձեզ, հայկական սուրբեր, ո՞վ իմ երբեմնի մտերիմներ, աննրվական զէնք մը բերելով՝ որուն յաղթանակը անկարօտ պիտի ըլլայ հաստատուելու: Հայեր, ձեր կեանքը յաւիտենական կրկնութիւն մ'է, հայրենիքի համար ընկած քաջերը՝ զայն զարնան մ' համար միայն կ'ապահովցնեն. անօրէնութեան սահման մը կը գծէք, զոր կ'եղծանեն փութով ասպատակող նոր նծոյզներու սմբակներ: Իմ մտածումս Հայաստանի պարիսպն է. իմ մտածումս հզօրագոյնն է անոր թումբերէն. քրիստոնէութիւնը անոր խրամն է օտարին դէմ, զայն անկամուրջ անդունդ մը պիտի ընեմ՝ գրականութեամբ:

Ով ընկերներս տօնական գիշերներու հաճոյքներու կախարդիչ ձայնը չէ որ դուրս կը հանէ զիս քարայրիս մթութենէն. զազափար մը կը բերեմ և այս զազափարը՝ իմ հիշակ երջանկութիւնս է:

Որսական անտառներու մէջ, հայկազուն ասպետներ, դաշտերու ընտանութեան, լեռներու խրոխտանքին մէջ՝ բնութիւնը կը վայելէք. լոյսի ջերմութիւնը, ձևերու մշտափոփոխ երգը՝ երջանկութիւնը ձեզի կ'ընծայեն՝ անգիտակից բնագոյով:

Բայց դեռ խուլ էք այս բնութեան վսեմ հայերէսին. լճակին վրայ կարկառած ժայռ մը՝ ձեզ համար անընթեռնլի է, ինչպէս իր պարունակած կախարդական գրերը: Որքան մարդը բոյսէն աւելի կը վայելէ աշխարհը, նոյնքան քան զինքն աւելի՝ Հանձարը. երկրագունտս երկրորդ յարկ մ'ունի՝ ուր ամէն բան գեղեցկացած է՝ և որուն դուրբաց է միայն բնորեալ մտքերուն համար: Գեղարուեստ, ոսկեհուռ պատմուճան մը չե՛ս՝ զարդ սնափառութեան. դուն կեանքի միակ իմաստն ես, միակ հոգին, դուն անոր երկարութիւնն ես: Գազափար մը կը բերեմ, և այս զազափարը՝ գրաւական ազգային գոյութեան՝ չեանքի բարձրագոյն ձև մ' է անհատին համար:

Ովերութեան սարսուռ մը կ'անցնի ժողովուրդին մէջէն. սրտիս անբուժելի կրակն է՝ որ ամբողջ ժողովուրդ մը կը վարակէ. ո՛չ մէկ հրդեհ աւելի վսեմ տեսարան մ'ունի: Արքունի մականը առջևս կը խոնարհի. հովուապետին զաւազանք «Եեցուկդ եմ» կը մրմնջէ. հրճուանքի արցունք մ'արդէն սքօղած է աչքէս՝ հայրենիքս, ժողովուրդս, անոնց արքան:

Հեոի՛ խանդավառ կեցցէներ, Հեոի՛ զափնեպսակներ... Փառքի սէրն անգամ նուաստութիւն մ'է այն հոգիներուն համար՝ որ զորձ մը ի՛ր գեղեցկութեան համար միայն կը սիրեն:

Ապագան թող չհամարի՝ թէ պատուոյ տեսիլք մ' ինձ առաջնորդ
 եղաւ անապատէն մինչև հոս, և թէ հայրենիքիս բարիքը՝ ինքնին միայ-
 նակ՝ բաւական չէր սրտիս:

Ատելի՛ է ինձ պսակը՝ սիրելի ձեռքերու մէջ անգամ, որովհետև
 զաղափար մը կը բերեմ և այս զաղափարը՝ իմ միակ փառքս է:

Հ. Կ. ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆ